

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

### Սուրբ Հոգիին անթերի գործունեությունը

Ճշմարտության Հոգիին յանձնուած մէկը, ամէն օր յաջողութեան յաջողութիւն եւ գորութեան գորութիւն կ'առաջնորդուի: Երբեմն այնպէ՛ս կը թուի մեզի, որ մենք ենք գործողը, բայց իրականութեան մէջ Սուրբ Հոգին է, որ կը գործէ: Սուրբ Հոգին կը գործէ կեանքին մէջ բոլոր անոնց, որոնք կը խնդրեն իր գործակցութիւնը: Շնորհաբաշխ Հոգին այնպիսի՝ ձեռքով կը գործէ, որ միշտ ալ գարմանք կը պատճառէ իր սիրելիներուն: Մեր խնդրանքին կը պատասխանէ եւ մեր փափաքները կը կատարէ մեր չակնկալած ձեռով: Եթէ նոյնիսկ տկարանանք եւ թերանանք կարգ մը գործերու մէջ, Սուրբ Հոգին բնա՛ւ չի թերանար, եւ առանց նայելու մեր չկամութեան եւ երբեմն ալ մեր ծուլութեան, կու գայ գորութեամբ գործելու մեր տկարութեան մէջ:

#### ԱՌԱԿ 8

Ես կը քալեմ արդարութեան ճանապարհէն եւ կը շրջագայիմ արդարութեան շափոններուն մէջ, որպէսզի զիս սիրողներուն հարստութիւն բաշխեմ եւ անոնց գանձարանները լեցնեմ բարութեամբ:

Եթէ ես ձեզի պիտի պատմեմ, թէ ինչ պիտի պատահի ամէն օր, պէտք է նախ ձեզի յիշեցնեմ, թէ ինչ կատարուած է արարչագործութեան սկիզբը:

## ԵԹԵ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

### ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՄՕՏԵՆԱԼ Կ՛ՈՒԶԵՍ, ԿԱՐԴԱ՝ Սաղմոս 16

Պահպանէ՛ զիս, ո՛վ Աստուած, քեզի ապաւինած եմ: ՏԻՐՈՋ ըսի. «Դո՛ւն ես Տէրս, քեզմէ գատ ուրախութիւն չունի՛մ»: Ի՛նչ փառահեղ եմ երկրի վրայ սուրբերը, ամբողջ փափաքս է՛ անոնց հետ ըլլալ: Բազմաթիւ ցաւերով պիտի հարուածուին անոնք, որոնք ուրիշ աստուածներու ետեւէն կը վազեն. բայց ես գոհեցու արիւն պիտի չընծայե՛մ անոնց, անոնց անունն իսկ բերանս պիտի չառնեմ:

Տէ՛ր, դո՛ւն ես իմ ժառանգութիւնս, ինձի վիճակուած բաժինը, եւ իմ բաժինս դուն պիտի տաս ինձի:

Ինձի ելած վիճակը ի՛նչ հաճելի է ինձի, իրաւամբ շնորհք մը, որ զիս խնդութեամբ կը լեցնէ: Կ՛օրհնաբանեմ Տէ՛րը, որ իր խորհուրդով կ'առաջնորդէ զիս, նոյնիսկ գիշերը զիս կը խրատէ խղճմտանքիս միջոցաւ: Միշտ Տէ՛րը իմ դիմացս ներկայ ունիմ. երբ անկա իմ կողմիս է՛ ոչինչ կրնայ զիս սասանեցնել: Ահա թէ ինչու սիրտս ուրախ է, հոգիս ցնծութեան մէջ է, եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի, որովհետեւ գիտեմ թէ զիս մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես, եւ պիտի չի թողուս, որ բու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:

Միտելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաե՛ն Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

#### ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԾԱԾԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,  
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԲԵՐ ԽՍ ՂՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿՐԱԿԻ, 28 ՅՈՒՆԻՍ 2020

ԹԻՒ 26

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԸՆԶԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 1.21-31: Հը. 7.25-8.11:

ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍ 12.38-45

### ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ

#### ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 12.38-45

Այն ատեն օրէնքի ուսուցիչներէն եւ փարիսէցիներէն ոմանք ըսին Յիսուսի. «Վարդապէ՛տ, կ'ուզենք, որ հրաշք մը գործես»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ անհաւատարիմ չա՛ր սերունդ. նշան մը կ'ուզէք. բայց Յովնան մարգարէին պատահած հրաշքէն գատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին երեք օր ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը Նինուէցիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:

«Երբ չար ոգի մը դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չգտնէ, ինքնիքն կ'ըսէ. "Ելլեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ": Ուստի կը վերադառնայ իր նախկին տունը եւ զայն կը գտնէ պարապ, մաքուր եւ յարդուած: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէք որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին»:

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ  
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ  
1.21-31**

Ի՛նչպէս պոռնիկ դարձաւ Սիոնը, հաւատարիմ՝ ֆաղափր: Ան, որ օրինապահութեամբ լեցուն էր. ուր առեւ մը արդարներ կը բնակէին, մինչ հիմա մարդասպաններով բնակուած է:

Անարժէֆ է արծաթդ, ո՛վ երուսաղէմ, ապօրինի շահուած. վաճառորդներդ ջուր կը խառնեն գինիին:

Իշխաններդ ինծի դէմ ապստամբած՝ գողերուն գործակից դարձեր են. կաշառֆ կը սիրեն եւ անիրաւ նուէրներու հետամուտ են. ո՛չ որբերուն իրաւունքը կը պաշտպանեն, ո՛չ ալ այրիներուն դատը կը լսեն:

Ուստի այսպէս կ'ըսէ մեր Տիրակալը, Երկնային Զօրքերու Տէրը, Իսրայէլի Հօր Աստուածը. «Վա՛յ ձեզի, Իսրայէլի՛ իշխաններ, որովհետեւ բարկութիւնս պիտի թափեմ ինծի հակառակողներուն վրայ, եւ վրէժխնդրութեամբ պիտի դատեմ ինծի թշնամացողները:

Ես ինքս ֆու մաքրութեանդ պիտի ձեռնարկեմ, եւ ինչպէս հալոցով մետաղը կը գտեն՝ այնպէս ես իմ կրակովս պիտի մաքրեմ քեզ, կորուստի պիտի մատնեմ ապստամբներդ, պիտի բնաջնջեմ բոլոր անօրէններդ, եւ բոլոր ամբարտաւանները պիտի խոնարհեցնեմ:

Շարունակել Աստուածաշունչէն



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ  
ՀՈՌՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ  
7.25-8.11**

Ապա ուրեմն ես ինքս միտֆով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմինով՝ մեղքի օրէնքին:

Եթէ այդպէս է, կը նշանակէ թէ անոնք, որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ օրէնքը չէր կրնար ընել, մարդկային բնութեան տկար ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց աշխարհ զրկելով իր Որդին, որ մեղքը յաղթահարելու համար մեր մեղանշական բնութիւնը իր վրայ առաւ եւ իր մարմնին մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի մենք որ հոգեւորապէս կ'ապրինք եւ ո՛չ մարմնաւորապէս, կարենանք լրիւ գործադրել օրէնքին արդար պահանջները: Անոնք, որ միայն իրենց մարմնական պահանջներով կը ղեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է մինչդեռ անոնք, որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է:

**ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ**

**ԳԻՏ ՆՇԽԱՐԱՅ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ  
ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ  
ԼՈՒՍԱԽՈՐԻՉԻ**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ, լման քարոզ դար մեծ արդիւնաւորութեամբ կառավարել է ամրացնել եւ Հայոց Եկեղեցին, փոխադրուեցաւ առ Աստուած 326-ին՝ իր առանձնացումի շրջաններէն մէկուն ընթացքին եւ ոչ ոք լուր ունեցաւ իր մահէն: Հովիւներ՝ գտնելով անոր մարմինը, թաղեցին զայն առանց գիտնալու, թէ որո՞ւն մարմինն էր: Տարիներ յետոյ յայտնուեցաւ անոր թաղման տեղը եւ նշխարները ու մեծ հանդէսով փոխադրուեցաւ ու թաղուեցաւ Թորգան անունը:

Հայաստանեայց Եկեղեցին ներկայիս երեք անգամ կը կատարէ Սուրբին յիշատակը.

- 1.- Զարչարանաց եւ Մուսն ի վերայ անունով՝ Մեծ Պահոց Զ. Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը:
- 2.- Ելն ի վիրապէն՝ Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի կանխող Շաբաթ օրը:
- 3.- Գիւտ Նշխարաց՝ զկնի Հոգեգալստեան Դ. Կիրակիի նախորդ Շաբաթ օրը:

Երեք տօներն ալ ունին իրենց նախընթաց շաբաթապահները: Օտար եկեղեցիներ կը տօնեն զայն Սեպտեմբեր 30-ին:

Ըստ Տօնացոյցին այս տարի Գիւտ Նշխարաց տօնը կը գուգադիպի Շաբաթ՝ 27 Յունիս, 2020-ին:

**ԱՍՏՈՒԱԾ ՀԱՄԱՏԱՅԵԱԼՆԵՐԸ  
ԿԸ ՓՐԿԷ ԻՐԵՆՑ  
ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

1.- *Ձեզի մարդկային փորձութենէն զատ ուրիշ բան չէ պատահած. բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու, որ ձեր կարողութենէն ակելի փորձուիք, հապա փորձութեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի կարող ըլլաք համբերել: (Ա. Կորնթացիս 10:13)*

2.- *Ուստի, եղբայրներ, քանի որ Աստուած ա՛յնքան ողորմած եղաւ ձեզի հանդէպ կ'աղաչեմ, որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք, որպէս կենդանի զոհ մը իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը: (Հռոմ 12:1)*

3.- *Տէրը զիտէ աստուածապաշտները փրկել իրենց փորձութիւններէն: (Բ. Պետրոսի 2:3)*

*Երանի՛ այն մարդուն, որ կը տուկայ փորձութեան, որովհետեւ փորձութենէն յաղթական դուրս եկողը որպէս մրցանակ պիտի ստանայ այն կեանքը, որ Տէրը խոստացաւ տալ զինք սիրողներուն: Բայց փորձութեան մէջ եղող ոեւէ մէկը թող չըսէ՛ թէ Աստուած է, որ զինք կը փորձէ, որովհետեւ Աստուած մասնակից չէ փորձութիւններուն որոնք չարէն կու գան, ո՛չ ալ ինք մարդիկը փորձութեան կ'ենթարկէ: Իւրաքանչիւր մարդ կը փորձուի իր իսկ ցանկութիւններէն տարուելով ու խաբուելով:*

*Կարդալ նաեւ՝ Յակոբոս 1:2-18*